



ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINAL LAW AND CRIMINOLOGY / УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ

*իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
«Արդարադատության ակադեմիայի» ղեկավար*

ARAKELYAN SERGEY

*Doctor of Legal Sciences, Professor,
Rector of the Academy of Justice of Armenia*

СЕРГЕЙ АРАКЕЛЯН

*доктор юридических наук, профессор,
ректор Академии юстиции Армении*



ՄԿՐՏՉՅԱՆ ՊԵՏԻԿ

«Արդարադատության ակադեմիայի» գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

MKRTCHYAN PETIK

Senior Specialist of the Unit of Organization of Scientific Research and Programmatic-methodological Activities of the Academy of Justice of Armenia

ПЕТИК МКРТЧЯН

главный специалист отдела организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции Армении

ԿԱՇԱՌՔԻ «ԿԱՐՇԵՑՅԱԼ» ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ*

SOME ISSUES ON QUALIFICATION OF «ALLEGED» MEDIATION IN BRIBERY*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КВАЛИФИКАЦИИ «МНИМОГО» ПОСРЕДНИЧЕСТВА ВО ВЗЯТОЧНИЧЕСТВЕ*

Պետության քրեական քաղաքականության արդյունավետ իրականացման առաջնահերթ նախապայմաններից է հանցագործությունների ճշգրիտ որակումը և որպես հետևանք՝ հանցանք կատարած անձանց արադարացի պատասխանատվությունը: Մինևույն ժամանակ հանցագործությունների սխալ որակումը, այդ թվում՝ կրկնաորակումը, այսինքն՝ կրկնակի մեղսայնացման արգելքի խախտումը, խափանում է քրեաիրավական սկզբունքների իրացումը և խարխլում անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիքները:

Ինչպես քրեական իրավունքի գիտության մեջ, այնպես էլ դատական պրակտիկայում շարունակում է վիճելի մնալ պրակտիկ տեսանկյունից խիստ կարևոր այն հարցը, թե ինչպես պետք է որակվի այն անձի արարքը, ով կաշառք տվողից վերցնում է կաշառքի առարկան՝ իբրև թե

* Հոդվածը ներկայացվել է 25.07.2018, գրախոսվել է 15.04.2019, ընդունվել է տպագրության 20.06.2019:

* The article was presented 25.07.2018, was reviewed 15.04.2019, was accepted to publication 20.06.2019.

* Статья представлена 25.07.2018, рецензирована 15.04.2019, принята в печать 20.06.2019.



պաշտոնատար անձին հանձնելու նպատակով, սակայն չի կատարում խոստումը և չի փոխանցում այն: Նման դեպքերը քրեական իրավունքի տեսության մեջ անվանվում են «կարծեցյալ» միջնորդություն կամ «կեղծ» միջնորդություն:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2013 թվականի ապրիլի 18-ին Ռ.Պապյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0053/01/12 քրեական գործով օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթներն իրացնելով, սահմանել է «կարծեցյալ» միջնորդի արարքի որակման հստակ կանոն: Մասնավորապես, հիշյալ որոշման 23-րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «կարծեցյալ» միջնորդությունն այն իրադրությունն է, երբ անձը կաշառք տվողից վերցնում է կաշառքի առարկան՝ իբրև թե պաշտոնատար անձին հանձնելու համար, սակայն մտադրություն չունի փոխանցել այն:

Ընդ որում, հնարավոր են «կարծեցյալ» միջնորդության մի քանի իրավիճակներ, այն է՝

1) կաշառք տալու նախաձեռնություն ցուցաբերում է «կարծեցյալ» միջնորդը, ով համոզում է կաշառք տվողին, որ ինքն անհրաժեշտ կապեր ունի համապատասխան պաշտոնատար անձի հետ և դրդում է իրեն տալ կաշառքի առարկան՝ համապատասխան պաշտոնատար անձին փոխանցելու համար, սակայն չի կատարում իր խոստումը և չի փոխանցում կաշառքի առարկան,

2) կաշառք տալու նախաձեռնություն ցուցաբերում է կաշառք տվողը, ով «կարծեցյալ» միջնորդին համոզում է կաշառքը տալ պաշտոնատար անձին, իսկ «կարծեցյալ» միջնորդը համաձայնում է՝ նպատակ չունենալով կաշառքի առարկան փոխանցել պաշտոնատար անձին:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, տարբերակելով «կարծեցյալ» միջնորդության իրավիճակները, արձանագրել է, որ այն դեպքում, երբ «կարծեցյալ» միջնորդը որևէ անձի օգտին գործողություններ (անգործություն) կատարելու նպատակով դրդում է անձին իրեն փոխանցել կաշառքի առարկան, որպեսզի ինքը փոխանցի պաշտոնատար անձին, սակայն ի սկզբանե նման մտադրություն չի ունենում, այլ ցանկանում է հափշտակել այն, ապա արարքը պետք է որակվի համակցության կանոններով՝ որպես խարդախություն և կաշառք տալու փորձի դրդչություն¹:

Վճռաբեկ դատարանի այս որոշումը կարևոր նշանակություն ունեցավ իրավակիրառ պրակտիկայի միասնականացման տեսանկյունից: Այս որոշումից հետո իրավակիրառ պրակտիկան ընթացավ այն ուղով, որ «կարծեցյալ» միջնորդության դեպքերում մասնակիցների արարքին տրվում է այն քրեաիրավական գնահատականը, որը վերոնշյալ որոշմամբ սահմանել էր ՀՀ Վճռաբեկ դատարանը²:

Ինչպես պարզ է դառնում ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման վերլուծությունից և համակարգային մեկնաբանությունից, «կարծեցյալ» միջնորդի արարքը յուրաքանչյուր իրավիճակում պետք է որակվի որպես խարդախություն («կարծեցյալ» միջնորդի կողմից կաշառքի առարկան իրեն հանձնելու նախաձեռնություն ցուցաբերելու դեպքում՝ նաև կաշառք տալու փորձի դրդչություն): Այս կապակցությամբ, սակայն, մասնագիտական գրականության մեջ որոշ հետազոտողներ կարծիք են արտահայտել, որ «կարծեցյալ» միջնորդի արարքը որպես խարդախություն որակելը առաջ է բերում իրավական բնույթի մի շարք խնդիրներ ու բարդություններ: Առաջին՝ հարց է ծագում կաշառք տվողի իրավական կարգավիճակի վերաբերյալ, որը վերը նշված որակման պայմաններում հանդես է գալիս որպես տուժող: Երկրորդ՝ անորոշ է մնում կաշառք ստացողին հանձնելու նպատակով «կարծեցյալ» միջնորդին փոխանցված նյութական

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 18-ի Ռ.Պապյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0053/01/12 քրեական գործով որոշումը:

² Տե՛ս օրինակ՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.07.2016թ. թիվ ՍԴ3/0068/01/16, 25.06.2015թ. թիվ ՍԴ3/0054/01/15, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 17.07.2017թ. թիվ ԵԿԴ/0042/01/16 գործերով դատավճիռները:



արժեքների հարցը, որը, մի դեպքում, կարող է դիտվել որպես կաշառքի, մյուս դեպքում՝ խարդախության առարկա: Դրանով պայմանավորված՝ որոշ քրեագետներ առաջարկում են «ապաքրեականացնել» (դիտել քրեախրավական հարաբերություններից դուրս) «կարծեցյալ» միջնորդությունն այն հիմնավորմամբ, որ այս դեպքում բացակայում է քրեախրավական պաշտպանության օբյեկտն ու առարկան¹:

Պատասխանելու համար այն հարցին, թե «կարծեցյալ» միջնորդության դեպքում անձի արարքում առկա են արդյոք խարդախության հանցակազմի հատկանիշները, կարծում ենք նախ և առաջ պետք է պարզաբանել, թե արդյոք հանցավոր նպատակով տրամադրված դրամը կամ այլ գույքը (օրինակ՝ տվյալ դեպքում կաշառքի առարկան) կարող է ընդհանրապես հանդիսանալ հափշտակության առարկա:

Այս կապակցությամբ Ի.Վ.Շիշկոն նշում է, որ հանցավոր նպատակով սեփականության օգտագործումը հանում է դրան քրեախրավական պաշտպանության օբյեկտի շրջանակներից: Հետևաբար այն դեպքում, երբ անձն իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը որպես կաշառք է տալիս պաշտոնատար անձին, ապա նա հանում է այն քաղաքացիախրավական նորմալ շրջանառությունից՝ զրկվելով այդ գույքի դեմ ունեցած գույքի դեպքում քրեախրավական պաշտպանության հնարավորությունից: Հեղինակը գտնում է նաև, որ կեղծ միջնորդի արարքը՝ որպես հանրային ոչ վտանգավոր արարք, պետք է դիտարկվի որպես քաղաքացիախրավական դելիկտ, որի նկատմամբ պետք է կիրառվեն քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները²:

Դժվար է համաձայնել այս մոտեցմանը, քանի որ այն չի բխում ՀՀ քրեական գործող օրենսգրքի ընդհանուր էությունից և քրեախրավական նորմերի բովանդակությունից: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի նորմերը անձի սեփականությունը քրեախրավական պաշտպանության տակ են առնում բացարձակ իմաստով, առանց որևէ սահմանափակումների: Հետևաբար, անկախ սեփականության իրավունքի իրացման նպատակից և ռեժիմներից՝ դրանք ենթակա են քրեախրավական պաշտպանության: Ուստի գտնում ենք, որ հանցավոր նպատակներով օգտագործվող գույքը ևս կարող է հանդիսանալ հափշտակության առարկա:

Ա.Ի. Մոխսենկոն, այս հարցը դիտարկելով «կարծեցյալ» միջնորդության համատեքստում, արդարացիորեն նշում է, որ անձի դիտավորությունը (միջնորդի միջոցով նյութական արժեքները որպես կաշառք փոխանցելուն ուղղված), որը գործադրում է կեղծ միջնորդը խարդախությամբ կաշառատուի գույքը հափշտակելիս, չի դադարեցնում կաշառք տվողի սեփականության իրավունքը դրա նկատմամբ, եթե, իհարկե, նա ի սկզբանե հանդես է եկել որպես այդ գույքի օրինական տիրապետող³: Բացի այդ, Ա.Մ.Եղիյանը «կարծեցյալ» միջնորդի արարքը որպես խարդախություն որակելը հիմնավորում է նաև քաղաքացիախրավական կարգավորման տրամաբանությամբ⁴:

Այսպիսով, չհավակնելով բացահայտել հարցի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ արտահայտված բոլոր մոտեցումներն ու տեսակետները, հարկ ենք համարում համաձայնել այն մոտեցմանը, որ «կարծեցյալ» միջնորդի արարքը համապատասխան հատկանիշների (դիտավորության ծագման պահի, հանցագործության առարկայի չափի, սուբյեկտին

¹ St' u նաև Егиян А.М. Разграничение посредничества во взяточничестве от смежных составов преступлений // European science, № 3 (13), էջեր 70-71:

² St' u Шишко И.В. Экономические правонарушения: Вопросы юридической оценки и ответственности. СПб., 2004. էջեր 185-186:

³ St' u նաև Капинус О.С. Изменения в законодательстве о должностных преступлениях: вопросы квалификации и освобождения взяткодателя от ответственности // Уголовное право, 2011, № 2, էջ 25:

⁴ St' u Егиян А.М., նշված աշխատ., էջ 71:



ներկայացվող պահանջների և այլն) առկայության դեպքում պետք է որակվի որպես խարդախություն: Բայցևայնպես, իրավական պարադոքսը, որը կարող է առաջանալ «կարծեցյալ» միջնորդի արարքը որպես խարդախություն որակելիս, թերևս այն է, թե ինչպես պետք է լուծվի կաշառքի առարկայի ճակատագիրը, և կաշառք տվողը՝ որպես խարդախությունից տուժող, արդյոք պետք է հնարավորություն ունենա «կարծեցյալ» միջնորդից հետ պահանջել կաշառքի առարկան:

Այսպես՝ կաշառք տվողի և «կարծեցյալ» միջնորդի միջև իրավահարաբերությունները, դիտարկելով քաղաքացիական իրավունքի տեսանկյունից, կարելի է գալ հետևության, որ այն գործարք է, որը հակասում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, (...): Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը՝ որպես գործարքի անվավերության հետևանք, նախատեսում է երկկողմանի ռեստիտուցիան (հոդված 304-րդ): Փաստորեն ստացվում է, որ կաշառատուի և «կարծեցյալ» միջնորդի միջև հարաբերություններն անվավեր գործարք ճանաչելու դեպքում կաշառատուն իրավունք է ունենալու հետ ստանալ կաշառքի առարկան կամ դրան համարժեք այլ գույք, և «կարծեցյալ» միջնորդից պահանջել վնասների հատուցում, ինչն անտրամաբանական է ու չի բխում արդարացիության սկզբունքի պահանջից:

Այս կապակցությամբ հետաքրքրարժան է ՌԴ քաղաքացիական օրենսգրքը, որով փորձ է արվել կարգավորել իրավակարգը և բարոյականությունը խախտելու նպատակով կնքված գործարքի առոչնչության հարաբերությունները: Մասնավորապես, ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 169-րդ հոդվածը սահմանում է, որ *հասարակական կարգի և բարոյականությունն ակնհայտ խախտելու նպատակով կնքված գործարքը առոչնչ է և հանգեցնում է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքների: Դատարանն իրավունք ունի դիտարկելու գործած կողմերի՝ գործարքով ամբողջ ստացածը դարձնել պետության սեփականություն կամ կիրառել օրենքով նախատեսված այլ հետևանքներ:*

Կարծում ենք, որ համանման կարգավորում անհրաժեշտ է նախատեսել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Միաժամանակ, սակայն, հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան կարգավորման բացակայությունն ինքնին չի կարող պայմանավորել կամ դրան հարմարեցնել «կարծեցյալ» միջնորդի արարքի քրեաիրավական գնահատականը:

Այսպիսով, գտնում ենք, որ քննարկվող հարցի արդարացի լուծումը կարող է ապահովվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելով: Վերջինս ենթադրում է համապատասխան կարգավորման նախատեսում, որի համաձայն, եթե անձը դուրս է գալիս իր իրավունքների իրացման օրենքով չարգելված շրջանակներից (հանցավոր նպատակով կնքում է գործարք)՝ ցանկանալով խախտել քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունները, ապա նա պետք է զրկվի քաղաքացիաիրավական կարգով իր խախտված իրավունքների պաշտպանություն հայցելու հնարավորությունից: Այս պարագայում դատարանին պետք է հնարավորություն ընձեռվի չկիրառելու երկկողմանի ռեստիտուցիա, իսկ «հանցավոր» գործարքի արդյունքում ամբողջ ստացածը՝ դարձնել պետության սեփականություն:

Ինչ վերաբերում է անձի արարքը կաշառք տալու փորձի դրդչություն որակելուն «կարծեցյալ» միջնորդության այն իրավիճակներում, երբ կաշառք տալու նախաձեռնություն ցուցաբերում է «կարծեցյալ» միջնորդը, ապա գտնում ենք, որ այսօրինակ որակումը չի բխում քրեական իրավունքի ազգային դոկտրինում հանցակցության էությունից և ՀՀ քրեական օրենսգրքում հանցակցության ինստիտուտը կանոնակարգող նորմերի բովանդակությունից: Տվյալ դիրքորոշումը պայմանավորված է այն իրողությամբ, որ հանցավորի արարքը հանցագործության դրդչություն որակելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, որ այն պարունակի ինչպես հանցակցության



օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն ընդհանրապես, այնպես էլ դրդչության՝ օրենքով նախատեսված հատկանիշները մասնավորապես: Մինչդեռ, «կարծեցյալ» միջնորդության պարագայում բացակայում են հանցակցության ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հատկանիշները: Հանցակցության առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, որ հանցակիցներն ունենան ընդհանուր, միասնական դիտավորություն (սուբյեկտիվ հատկանիշ) և նրանց գործություններն ուղղված լինեն բոլորի համար ցանկալի հանցավոր նպատակի իրագործմանը (գործողությունների համատեղության հատկանիշ): Այլ խոսքով՝ հանցակիցների գործողությունների նույնօբյեկտ ուղղվածությունը և միևնույն հանցավոր արդյունքին հասնելու նպատակով արարքների համատեղումը հանցակցության բնութագրիչ հատկանիշներն են: «Կարծեցյալ» միջնորդության դեպքում, սակայն, ինչպես մասնակիցների արարքների ուղղվածությունը, այնպես էլ նրանց դիտավորության բովանդակությունը չեն համընկնում. կաշառք տվողը նպատակ է հետապնդում կաշառքի միջոցով բավարարել իր ապօրինի շահերը, իսկ «կարծեցյալ» միջնորդը՝ խաբեության միջոցով նյութական օգուտ քաղել դրանից:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասի նկատմամբ կիրառելով իրավամեկնաբանման ռազմավարության՝ օրենսդրի կամքի բացահայտման հնարքը, ակնհայտ է դառնում, որ ընդհանուր հանցակցության ձևի դեպքում հանցակիցը հանցակցում է ավարտված հանցագործության: Նրա արարքը չավարտված հանցագործության կանոններով որակվում է միայն այն դեպքում, երբ կատարողն իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցնում հանցագործությունը: Չավարտված հանցագործության հանցակցությունը ենթադրում է ոչ միայն կատարողի, այլև մնացած բոլոր հանցակիցների կամքը, քանի որ հանցակցության մյուս բնութագրիչ հատկանիշը հանցակիցների կամքի մեկտեղումն է ընդհանուր հանցավոր արդյունքին հասնելու նպատակով: Ուստի, այն դեպքում, երբ հանցագործությունն ավարտին չի հասցվում անձի (ենթադրյալ հանցակցի) կամքով ու նրա գործողությունների հետևանքով, ապա խոսք չի կարող գնալ տվյալ անձի՝ որպես հանցակից հանդես գալու մասին: Վերջինիս արարքը պետք է քննարկվի կա՛մ հանցակցության ինստիտուտի շրջանակներից դուրս, կա՛մ առնվազն հանցակցի կամովին հրաժարման համատեքստում:

Ինչ վերաբերում է «կարծեցյալ» միջնորդությանը, ապա այս դեպքում հանցագործությունը (կաշառք տալը) ավարտին չի հասցվում ոչ թե «կարծեցյալ» միջնորդի կամքից անկախ հանգամանքներով, այլ վերջինիս կամքով և վերջինիս գործողությունների հետևանքով: Ուստի, «կարծեցյալ» միջնորդին հանցակից ճանաչելը ոչ իրավաչափ է և չի բխում հանցակցության ընդհանուր էությունից:

Հաշվի առնելով վերոգրայլը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ «կարծեցյալ» միջնորդի արարքը մեկնաբանել է ընդհանուր հանցակցության ինստիտուտից կտրված՝ ակցենտավորելով դրդչության օբյեկտիվ կողմը (պոտենցիալ կաշառք տվողի մոտ կաշառք տալու դիտավորություն առաջացնելը): Արդյունքում «կարծեցյալ» միջնորդի արարքին, կաշառք տալու փորձի դրդչության մասով, տրվել է սխալ քրեաիրավական գնահատական: Այդ ամենով պայմանավորված, խախտվել է նաև կրկնակի մեղսայնացման արգելքի սկզբունքը: Հետևաբար, «կարծեցյալ» միջնորդության յուրաքանչյուր իրավիճակում «կարծեցյալ» միջնորդի արարքը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակվի միայն որպես խարդախություն: Այս մոտեցումը համահունչ է նաև վերջին տարիներին ՌԴ-ում ձևավորված իրավակիրառ պրակտիկային¹:

¹ Ст'я Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 9 июля 2013 г. № 24 «О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях» //СПС «КонсультантПлюс»:



Առանձին հետաքրքրություն և տեսագործական կարևոր նշանակություն է ներկայացնում այն դեպքերի որակումը, երբ միջնորդը կաշառատուից կաշառքի առարկան ստանալուց հետո է որոշում այն դարձնել իրենը: Այլ կերպ ասած՝ երբ կաշառքի առարկան իրենը դարձնելու միջնորդի դիտավորությունը ծագում է այն պահից հետո, երբ կաշառք տվողը կաշառք ստացողին հանձնելու նպատակով կաշառքի առարկան փոխանցում է իրեն:

Այս կապակցությամբ ևս մասնագիտական գրականության մեջ առկա են տարածայնություններ: Մասնավորապես՝ Մ.Ի.Մոխսենկոն գտնում է, որ այս դեպքում միջնորդի արարքը ենթակա է որակման՝ որպես կաշառքի միջնորդություն և խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնասի պատճառում, եթե միջնորդի անհիմն հարստացման չափը խոշոր է¹: Վ.Վ.Խիլյուտայի կարծիքով, միջնորդի արարքն ամեն դեպքում պետք է որակվի որպես խարդախություն, նույնիսկ այն պարագայում, երբ հափշտակության դիտավորությունը միջնորդի մոտ ծագել է կաշառքի առարկան ստանալուց հետո, քանի որ այստեղ առկա է խարդախության՝ վստահությունը չարաշահելու հատկանիշը²:

Տեսության մեջ կարծիք է արտահայտվել նաև, որ, եթե միջնորդի մոտ հափշտակության դիտավորության ծագման պահը հաջորդում է կաշառքի առարկան վերջինիս կողմից ստանալու պահին, ապա նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Այսպես, Պ.Ս.Յանիի կարծիքով, իրավակիրառողները միջնորդի արարքը կարող են դիտարկել խարդախության հանցակազմի տիրույթում, այնուհետև, հաշվի առնելով խարդախության սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, վերջինիս ազատել քրեական պատասխանատվությունից³:

Վերը նշված մոտեցումներին, սակայն, դժվար է համաձայնել: Բանն այն է, որ հիշյալ դեպքերում, ըստ մեզ, միջնորդի արարքն իր հատկանիշներով չի համապատասխանում ո՛չ կաշառքի միջնորդության ավարտված հանցակազմի, ո՛չ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու և ո՛չ էլ խարդախության հանցակազմերի հատկանիշներին հետևյալ պատճառաբանությամբ.

Առաջին՝ կաշառքի ֆիզիկական միջնորդությունը կարելի է համարել ավարտված, երբ հանցավորը կաշառքի առարկան կաշառք տվողից վերցնում և փոխանցում է կաշառք ստացողին: Սա ուղղակիորեն բխում է ՀՀ քր. օր-ի 313-րդ հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությունից: Ուստի՝ կաշառքի ավարտված միջնորդության մասին չի կարող խոսք գնալ այն պարագայում, երբ միջնորդը կաշառատուից վերցրել է կաշառքի առարկան և դեռ չի փոխանցել կաշառք ստացողին: Այս դեպքում բացակայում է կաշառքի միջնորդության ավարտուն հանցակազմը, սակայն կարող է խոսք գնալ չավարտված հանցագործության, տվյալ դեպքում՝ հանցափորձի մասին:

Նշված իրավիճակում անձի արարքը որպես միջնորդության փորձ որակելու համար ելակետային նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք միջնորդի կողմից կաշառքի առարկան կաշառք ստացողին չփոխանցելը պայմանավորված է եղել միջնորդի կամքով և նրա գործողությունների հետևանքով, թե՞ վերջինիս կամքից անկախ հանգամանքներով: Միջնորդի կողմից իր կամքից անկախ հանգամանքներով կաշառքի առարկան կաշառք ստացողին չփոխանցելու դեպքերի որակմանը դեռևս կանդրադառնանք, իսկ այն դեպքում, երբ անձի արարք-

¹ Տե՛ս Моисеенко М.И. Посредничество во взяточничестве: уголовно-правовая характеристика и вопросы квалификации: Автореф. дис... канд. юрид. наук. Екатеринбург, 2015, էջ 24:

² Տե՛ս Хилjuta В.В. Самовознаграждение посредника: от мнимого посредничества к злоупотреблению доверием. Уголовное право. 2016. № 6. էջեր 80-89:

³ Տե՛ս Яни П.С. Квалификация «самовознаграждения» посредника во взяточничестве //Законность. 2015. № 1, էջեր 20-25:



ներն ի սկզբանե ուղղված են կաշառքի միջնորդություն կատարելուն, սակայն հետագայում, ստանալով կաշառքի առարկան, վերջինս կամովին հրաժարվում է այն փոխանցել կաշառք ստացողին և դարձնում է իրենը, ապա միջնորդի արարքը, կաշառքի միջնորդության մասով, պետք է քննարկվի հանցագործությունից կամովին հրաժարման համատեքստում:

Փաստորեն ստացվում է, որ միջնորդը, կաշառքի առարկան ստանալով, իրականացնում է կաշառքի միջնորդության հանցակազմի օբյեկտիվ կողմի բովանդակությունը կազմող գործությունների միայն մի մասը: Այնուհետև, հետ կանգնելով իր հանցավոր նպատակից և կամովին դադարեցնելով սկզբնական հանցավոր մտադրության իրականացումը՝ չի փոխանցում կաշառքի առարկան կաշառք ստացողին: Ուստի՝ այս պարագայում անձը պետք է ազատվի կաշառքի միջնորդության համար քրեական պատասխանատվությունից՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու պատճառաբանությամբ, քանզի, կարծում ենք, որ այս իրավիճակում լիովին առկա են կամովին հրաժարման ինստիտուտի կիրառման իրավական նախադրյալները:

Չնայած նրան, որ նկարագրված դեպքերում կաշառքի միջնորդության համար անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության՝ այնուհանդերձ քննարկման է ենթակա նրա արարքում այլ հանցակազմի առկայությունը, ինչին կանդրադառնանք հաջորդիվ:

Երկրորդ՝ գտնում ենք նաև, որ այս իրավիճակում միջնորդի արարքը որպես խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնասի պատճառում որակելը ևս չի բխում քրեաիրավական համապատասխան նորմի բովանդակությունից: Կաշառատուի կողմից միջնորդին փոխանցված կաշառքի առարկան չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկա, քանի որ չի համապատասխանում խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմի առարկայի բովանդակությանը: Այդ հանցակազմի իմաստով հանցագործության առարկան են հանդիսանում.

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում չգտնվող գույքը, որը հանցավորի ապօրինի գործողությունների հետևանքով մուտք չի գործում նրանց ֆոնդ (բաց թողնված օգուտ): Օրինակ՝ հանցավորն անօրինական գիծ անցկացնելու կամ հաշվիչի ցուցիչը խախտելու միջոցով չի վճարում գազի կամ էլեկտրաէներգիայի վճարը և այլն.

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը ապօրինի օգտագործվելու արդյունքում մաշվում է: Այս դեպքում գույքային վնասը դրսևորվում է մաշվածության (ամորտիզացիայի) հետևանքով նշված գույքի արժեքի նվազման միջոցով: Օրինակ՝ հանցավորը, տուժողին խաբելով և նրա վստահությունը չարաշահելով, ձեռք է բերում վերջինիս տրակտորը միայն գյուղում վարելու թույլտվություն, մինչդեռ տուժողի՝ գյուղից բացակայելու ամբողջ ընթացքում, առանց նրա համաձայնության, ծառայեցնում է այն սեփական խոտհարքերը մշակելու և մտերիմներին «լավություն» անելու նպատակով, որի արդյունքում տրակտորն ամորտիզացվում է.

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը քննարկվող հանցագործության հետևանքով դուրս է գալիս նրա ֆոնդից, սակայն այդ գույքը դուրս է բերվում ոչ ուղղակիորեն հանցավորի կողմից և չի դարձվում նրանը կամ նրա դիտավորության մեջ ընդգրկված այլ անձինը:

Այս դեպքում գույքի դուրսբերումը սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդից դրսևորվում է որպես վերջիններիս կողմից իրենց **օրինական պարտավորությունների կատարում** (օրինակ՝ վարձակալի կողմից կոմունալ վճարումների չկատարման հետևանքով սեփականատիրոջ կողմից դրանց վճարումը, աշխատողի կողմից աշխատանքային գործունեության հետ չկապված անձնական նպատակներով գործատուի կողմից վճարվող կապի ծառայություն-



ներն օգտագործելը և այլն):¹ Հետևաբար, այնքանով, որքանով միջնորդին փոխանցված կաշառքի առարկան դեռևս գտնվում է կաշառք տվողի գույքային ֆոնդում, և նրա ֆոնդից դուրս է գալիս միջնորդի անմիջական գործողությունների արդյունքում, ով, գույքը հանելով կաշառատուի գույքային ֆոնդից, դարձնում է իրենը, կաշառքի առարկան նշված իրավիճակում չի կարող հանդես գալ որպես ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկա:

*Երրորդ*² ինչ վերաբերում է միջնորդի արարքը որպես խարդախություն որակելուն, ապա գտնում ենք, որ անձի արարքում խարդախության հանցակազմի առկայությունը հավաստելու համար առանցքային նշանակություն ունի սուբյեկտի դիտավորության և դրա ծագման պահի բացահայտումը: Մեր կարծիքով, խարդախության դեպքում ուրիշի գույքը հափշտակելու հանցավորի դիտավորությունը ծագում է մինչև այդ գույքը սեփականատիրոջ կամ այլ տիտղոսային տիրապետողի կողմից իր տիրապետությանը հանձնելը կամ հանձնելու պահին: Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ գույքի փոխանցումը պայմանավորված լինի գույքի սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի գիտակցության վրա հանցավորի ունեցած ներգործությամբ, որը պետք է դրսևորվի խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Միաժամանակ հանցավորի կողմից սեփականատիրոջը կամ գույքի այլ օրինական տիրապետողին խաբելու կամ վստահությունը չարաշահելու և վերջիններիս կողմից այդ գույքը հանցավորին փոխանցելու միջև պետք է գոյություն ունենա հստակ պատճառական կապ:

Այսպիսով, եթե սեփականատիրոջ կամ գույքի այլ տիտղոսային տիրապետողի կողմից գույքի փոխանցումը պայմանավորված է եղել վերջինիս կամքով, որը չի եղել հանցավորի խաբեության կամ առկա վստահությունը չարաշահելու արդյունք, կամ հանցավորի մոտ հափշտակություն կատարելու դիտավորությունը ծագել է սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կողմից գույքն իրեն փոխանցելուց հետո, ապա խարդախության հանցակազմը բացակայում է: Այս մոտեցումը համահունչ է նաև քրեական իրավունքի ազգային դոկտրինում խարդախության հանցակազմի բովանդակությանը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով խարդախության հանցակազմին տրված մեկնաբանությանը²:

Մինևս ժամանակ, եթե հափշտակության դիտավորությունը հանցավորի մոտ առաջանում է գույքն իրեն փոխանցելուց հետո, ապա, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, նրա արարքը կարող է պարունակել յուրացման (վատնման) հանցակազմի հատկանիշներ (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված): Այս մոտեցումը հիմնավորում են նաև այլ հեղինակներ: Մասնավորապես, Գ.Վ. Վերինան նշում է, որ յուրացման կամ վատնման դեպքում գույքը իրենը կամ այլ անձինը դարձնելու դիտավորությունը ծագում է այն ժամանակ, երբ հանցավորն արդեն իսկ տիրապետում է այդ գույքին: Մինչդեռ, խարդախի դիտավորությունը ծագում է մինչև գույքի փոխանցումը, գործարքի կամ պայմանագրի կնքումը³:

Հարկ է նշել նաև, որ այն դեպքերում, երբ կաշառքի առարկան հափշտակելու դիտավորությունը ծագում է կաշառատուի կողմից այն հանցավորին փոխանցելուց հետո, արարքը պետք է որակվի որպես յուրացում կամ վատնում: Մեր այս դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կաշառատուի կողմից միջնորդին փոխանցված գույքը քրեաիրավական իմաստով հանդիսանում է հանցավորին վստահված գույք, որը կաշառատուն տրամադրում է

¹ St'u Энциклопедия уголовного права. Том 18. Преступление против собственности. СПб ГКА, СПб., 2011, էջ 364, ՀՀ Վճռաբեկ դատարանի Մ.Դիլանյանի վերաբերյալ 24.06.2016թ. թիվ ԵԱԲԴ/0105/01/14 գործով որոշման 15-րդ կետ:

² St'u, օրինակ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի Լ.Ավետիսյանի վերաբերյալ 24.02.2011թ. թիվ ԵԿԴ/0176/01/09 գործով որոշում:

³ St'u Верина Г.В. Преступления против собственности: проблемы квалификации и наказания / под ред. Б.Т. Разгильдиева. Саратов: СГАП, 2001, էջեր 119-120:



միջնորդին՝ պաշտոնատար անձին կաշառելու մտայնությամբ: Նկարագրված իրավիճակում կաշառքի առարկայի նկատմամբ կաշառատուի սեփականության իրավունքը չի դադարում: Կաշառք տվողը միջնորդին կաշառքի առարկայի նկատմամբ օժտում է կոնկրետ «լիազորություններով», իսկ միջնորդը, օգտագործելով իր այդ լիազորությունները՝ տիրանում է կաշառատուի կողմից իրեն հանձնած կաշառքի առարկային:

«Կարծեցյալ» միջնորդությունից անհրաժեշտ է տարբերակել, այսպես կոչված, «չհաջողված միջնորդությունը», որի դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին չի փոխանցվում ոչ թե միջնորդի կամքով, ալ նրա կամքից անկախ հանգամանքներով (օրինակ՝ վերջինս բռնվում է իրավապահների կողմից): Այս իրավիճակում միջնորդի արարքը պարունակում է կաշառքի միջնորդության փորձի հատկանիշները, իսկ կաշառք տվողի արարքը համապատասխանում է կաշառք տալու փորձի հանցակազմի հատկանիշներին¹:

Այս կապակցությամբ քրեագետների կարծիքները, կարծես, համընկնում են: Բայց և այնպես, չհաջողված միջնորդության հարցը քննարկելիս ուսումնասիրողները սահմափակվում են միջնորդի արարքը միայն որպես կաշառքի միջնորդության փորձ որակելով: Մեր կարծիքով, սակայն, եթե կաշառքի միջնորդը, թեև իր կամքից անկախ հանգամանքներով, չի կարողանում կաշառքի առարկան փոխանցել կաշառք ստացողին, բայց այն կաշառատուին վերադարձնելու օբյեկտիվ հնարավորություն է ունենում (օրինակ՝ երբ կաշառք ստացողը մահանում է և չի հասցնում ստանալ կաշառքի առարկան կամ հրաժարվում է այն ընդունել և այլն), ինչը չի անում, այլ ընդհակառակը՝ դարձնում է իրենը, ապա միջնորդի՝ կաշառքի առարկան իրենը դարձնելու դիտավորությունը և դրա իրականացմանն ուղղված գործողությունները պետք է արժանանան ինքնուրույն քրեաիրավական գնահատականի: Մասնավորապես, նման դեպքերում միջնորդի արարքը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, բացի կաշառքի միջնորդության փորձից, պետք է որակվի նաև որպես յուրացում կամ վատնում:

Առանձին հետաքրքրություն է ներակայացնում նաև այն դեպքերի որակումը, երբ միջնորդը, կաշառատուից ստանալով կաշառքի առարկան, մասամբ է փոխանցում այն կաշառք ստացողին, իսկ կաշառքի առարկայի մյուս մասը դարձնում է իրենը: Կարծում ենք, որ տվյալ իրավիճակում ևս, կախված կաշառքի առարկան մասամբ հափշտակելու միջնորդի դիտավորության ծագման պահից, վերջինիս արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ. որպես ավարտված կաշառքի միջնորդություն և խարդախություն կամ յուրացում կամ վատնում (հափշտակված մասի չափով): Ասպես, եթե հափշտակելու դիտավորությունը ծագում է՝

ա) մինչև կաշառքի առարկան փոխանցելը կամ փոխանցելու ընթացքում, ապա հանցավորի արարքը ենթակա է որակման որպես կաշառքի միջնորդություն և խարդախություն,

բ) կաշառքի առարկան փոխանցելուց հետո, ապա հանցավորի արարքը կաշառքի միջնորդությունից բացի պետք է որակվի որպես յուրացում կամ վատնում:

Տվյալ դիրքորոշումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ միջնորդի դիտավորությունը նկարագրված իրավիճակներում ունենում է երկօբյեկտ բովանդակություն. նրա գործողությունները ուղղվում են թե՛ պետական ապարատի նորմալ գործունեությունը և թե՛ սեփականության իրավունքի իրացումն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ:

Հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ այս դեպքերի որակման կապակցությամբ արտահայտվել է նաև այլ մոտեցում: Առաջարկվող որակումների հետ կապված՝ մեր հիմնական անհամաձայնությունը պայմանավորված է այն իրավիճակին տրված քրեաիրավական գնահատականով, երբ կաշառքի առարկայի մասը հափշտակելու դիտավորությունը միջնորդի

¹ Տե՛ս Գրոшев А. В. Мнимое посредничество во взяточничестве: вопросы квалификации // Российский следователь. - М.: Юрист, 2012, № 23, էջեր 36-38:



մոտ ծագում է կաշառատուի կողմից այն իրեն փոխանցելուց հետո: Այս կապակցությամբ Ա.Մ. Եղիյանն առաջարկում է այն դեպքում, երբ կաշառքի առարկայի հաշվին հարստանալու շարժառիթը միջնորդի մոտ առաջանում է կաշառատուի կողմից այն իրեն փաստացի հանձնելուց հետո (խոսքն այն իրավիճակների մասին է, երբ միջնորդը կաշառքի առարկան մասամբ է փոխանցում կաշառք ստացողին, իսկ մնացած մասը դարձնում իրենը), միջնորդի արարքը որակել որպես կաշառքի միջնորդություն և խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնասի պատճառում¹:

Տվյալ իրավիճակում միջնորդի արարքը որպես կաշառքի միջնորդություն որակելը, կարծում ենք, ճիշտ է և արդարացված, քանի որ այն իր մեջ արդեն իսկ պարունակում է կաշառքի միջնորդության ավարտված հանցակազմի հատկանիշները: Դժվար է, սակայն, համաձայնել միջնորդի արարքը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնասի պատճառում որակելուն, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, կաշառատուի կողմից միջնորդին փոխանցված կաշառքի առարկան չի կարող հանդիսանալ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնասի պատճառման հանցակազմի առարկա, քանզի այս հանցակազմի առարկան ունի միանգամայն այլ բովանդակություն:

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի նաև կաշառքի առարկան միջնորդի կողմից մասնակի յուրացնելու դեպքում կաշառատուի արարքի քրեաիրավական գնահատականը: Այս կապակցությամբ քննության առարկա դարձնելով կաշառատուի արարքի որակման հարցերը՝ կարծում ենք, որ, կախված կաշառք տվողի կողմից միջնորդին հանձնված և վերջինիս կողմից կաշառք ստացողին փոխանցված կաշառքի առարկայի չափերից, հնարավոր են որակման հետևյալ իրավիճակները.

Առաջին՝ երբ առկա է անհամապատասխանություն կաշառք տվողի կողմից միջնորդին հանձնված և վերջինիս կողմից կաշառք ստացողին փոխանցված կաշառքի առարկայի չափերի միջև, ու այդ անհամապատասխանությունը կրում է իրավական բնույթ (օրինակ՝ կաշառք տվողի կողմից միջնորդին տրված կաշառքի առարկայի չափը առանձնապես խոշոր է, մինչդեռ միջնորդի կողմից կաշառք ստացողին փոխանցված կաշառքի առարկան խոշոր չափերի է), կաշառք տվողի արարքը, փաստական սխալի կանոններով, ենթակա է որակման որպես առանձնապես խոշոր չափերի կաշառք տալու փորձ (ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

Երկրորդ՝ երբ առկա է անհամապատասխանություն կաշառք տվողի կողմից միջնորդին հանձնված և վերջինիս կողմից կաշառք ստացողին փոխանցված կաշառքի առարկայի չափերի միջև, սակայն այդ անհամապատասխանությունը չի կրում իրավական բնույթ (օրինակ՝ կաշառք տվողի կողմից միջնորդին տրված կաշառքի առարկան կազմում է երկու միլիոն ՀՀ դրամ, մինչդեռ միջնորդը կաշառք ստացողին է փոխանցում միայն մեկ միլիոն երկու հարյուր հազար ՀՀ դրամը, կաշառք տվողի արարքը ենթակա է որակման որպես ավարտված առանձնապես խոշոր չափերի կաշառք տալ (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ): Բանն այն է, որ մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամը ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի իմաստով համարվում է առանձնապես խոշոր չափ (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 5-րդ մաս) և տեղավորվում է հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության առավել որակյալ հատկանիշի շրջանակներում: Բնական է, որ նկարագրված իրավիճակները վերաբերում են այն դեպքերին, երբ բացակայում է կաշառք տվողի և ստացողի կողմից կաշառքի առարկայի և դրա չափի շուրջ ձեռք բերված համաձայնությունը, քանզի այդ հանգամանքների

¹ Տե՛ս Եգիյան Ա.Մ. Проблемы квалификации объективной стороны посредничества во взяточничестве, Балтийский гуманитарный журнал. Том 5, № 1 (14), էջ 178:



վերաբերյալ կաշառք տվողի և ստացողի ձեռք բերված կոնկրետ, առկա և իրական համաձայնությունն¹, ինքնին, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ և 312-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերի օրենսդրական նկարագրման եղանակով պայմանավորված, կհանգեցնի կաշառք տալու և ստանալու ավարտված հանցագործությունների:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է գալ հետևության, որ.

– «կարծեցյալ» միջնորդության որակման վերաբերյալ ՀՀ դատական պրակտիկան, «կարծեցյալ» միջնորդի արարքը որպես կաշառք տալու փորձի դրոշմություն որակելու մասով, անընդունելի է, քանի որ չի բխում քրեաիրավական համապատասխան նորմերի էությունից,

– «կարծեցյալ» միջնորդության յուրաքանչյուր իրավիճակում «կարծեցյալ» միջնորդի արարքը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակել միայն որպես խարդախություն,

– միջնորդի արարքը, երբ վերջինիս մոտ կաշառքի առարկան հափշտակելու դիտավորությունը ծագում է կաշառատու կողմից այն իրեն փոխանցելուց հետո, պետք է որակվի որպես յուրացում կամ վատնում,

– «չհաջողված միջնորդության» դեպքում միջնորդի արարքը պետք է որակվի որպես կաշառքի միջնորդության փորձ,

– այն դեպքերում, երբ կաշառքի միջնորդն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում կաշառքի առարկան փոխանցել կաշառք ստացողին, սակայն այն չի վերադարձնում կաշառատուին, այլ դարձնում է իրենը, միջնորդի արարքը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, բացի կաշառքի միջնորդության փորձից, պետք է որակվի նաև որպես յուրացում կամ վատնում,

– երբ միջնորդը, կաշառատուից ստանալով կաշառքի առարկան, մասամբ է փոխանցում այն կաշառք ստացողին, իսկ մյուս մասը դարձնում է իրենը, ապա, կախված կաշառքի առարկան մասամբ հափշտակելու վերջինիս դիտավորության ծագման պահից, նրա արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ՝ որպես ավարտված կաշառքի միջնորդություն և խարդախություն կամ յուրացում կամ վատնում:

Annotation. In the article are analyzed some issues, arising in investigative and judicial practice while qualification of so-called «alleged» mediation in bribery and its differentiation from neighboring (related) crime structures.

Аннотация. В статье анализируется ряд вопросов, возникающих в судебно-следственной практике при квалификации так называемого «мнимого» посредничества во взяточничестве и его разграничении от смежных составов преступлений.

Հիմնարաներ՝ կաշառքի միջնորդություն, «կարծեցյալ» միջնորդություն, հափշտակություն, խարդախություն, յուրացում, վատնում:

Key words: mediation in bribery, «alleged» mediation, theft, fraud, misappropriation, embezzlement.

Ключевые слова: посредничество во взяточничестве, «мнимое» посредничество, хищение, мошенничество, присвоение, растрата.

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Է. Զաքարյանի և ուրիշների վերաբերյալ 15.08.2014 թ. թիվ ԵԿԴ/0002/01/03 գործով որոշում: